# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՄԱՐՏԻ 2021թվականի N 23

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ հաստատված կարգով.

Որոշում եմ՝

1.Նարինե Մելիքի Խաչոյանին տալ բնակելի տան վերակառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Քարաշամբ համայնքի Ամառանոցային թաղամասի 10-րդ փողոցի 39 հասցեի հողամասում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նարինե Մելիքի Խաչոյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավարի ժ/պ ՝ ԱՐՇԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 24

### ԷԼԼԱ ՍԵՄՅՈՆԻ ՏԻՏՈՎԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի.

Որոշում եմ՝

1.Բավարարել Էլլա Սեմյոնի Տիտովայի դիմումը Կոտայքի մարզ Քարաշամբ համայնքի 2-րդ փ. թիվ 11 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող 07-066-0016-0008 կադաստրային ծածկագրի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում բնակելի տան կառուցման վերաբերյալ և տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ կառուցման աշխատանքների աշխատանքային նախագծային փաստաթղթեր պատվիրելու համար:

2. Պարտավորեցնել քաղաքացի Էլլա Սեմյոնի Տիտովային կառուցապատման աշխատանքներն սկսել միայն անհրաժեշտ փաստաթղթերի առկայության դեպքում:

Համայնքի ղեկավարի ժ/Պ՝ ԱՐՇԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 25

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ հաստատված կարգով

Որոշում եմ՝

1.Էլլա Սեմյոնի Տիտովային տալ բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Քարաշամբ համայնքի 2-րդ փողոցի թիվ 11 հասցեի հողամասում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էլլա Սեմյոնի Տիտովային որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավարի ժ/Պ ՝ ԱՐՇԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 26

## ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N731-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հաստատված կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման, հիմք ընդունելով Ռոզա Վարդանի Մելքոնյանի կողմից 2021 թվականի ապրիլի 5-ին Քարաշամբ համայնքի ղեկավարին ներկայացված դիմումը և այն հանգամանքը, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, նաև դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի ներկայացնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը

Որոշում եմ՝

1.Կոտայքի մարզի Քարաշամբ համայնքի կադաստարային քարտեզի 07-066-0028-0025 ծածկագրի 0,00570 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի:

2.Քարաշամբ համայնքի կադաստրային քարտեզի 07-066-0028-0025 ծածկագրի 0,00570 հահամայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի վրա քաղաքացի Ռոզա Վարդանի Մելքոնյանի կողմից ինքնակամ կառուցված 6,03 քմ մակերեսով պարիսպը ճանաչել որպես համայնքային սեփականություն:

3. Օրինականացնել Քարաշամբ համայնքի կադաստրային քարտեզի 07-066-0028-0025 ծածկագրի 0,00570 հա համայնքային հողամասի վրա ինքնակամ կառուցված պարիսպը և տրամադրել հետևյալ հասցեն՝ Կոտայքի մարզ, Քարաշամբ համայնք, 1փ. 4 նրբ. 1/1:

4.Համաձայն ներկայացված հողամասի հատակագծի հնգօրյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում Քարաշամբ համայնքի կադաստրային քարտեզի 07-066-0028-0025 ծածկագրի 0,00570 հա համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի և պարսպի համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական ստանալու համար:

5.Օրինական ճանաչված կառույցի նկատմամբ պետական գրանցում ստանալուց հետո, 15 օրյա ժամկետում շինությունը և հողամասը Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման հավելվածի 34 և 35 կետերով սահմանված պայմաններով ձեռք բերելու առաջարկությամբ դիմել կառույցն իրականացրած անձին՝ Ռոզա Վարդանի Մելքոնյանին:

Համայնքի ղեկավարի ժ/Պ՝ ԱՐՇԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N27

ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՄԱՐԻԵՏԱ ԱՆԴՐԵՅԻ ԱՂԱՄԱԼՈՎԱՅԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29- ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի ինչպես նաև Քարաշամբ համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 10-ի N6 որոշմամբ և հիմք ընդունելով իր դուստր՝ Անահիտ Ռոբերտի Հակոբյանի դիմումը.

Որոշում եմ՝

Հանգուցյալ Մարիետա Անդրեյի Աղամալովային պատկանող 07-066-0116-0038 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասը գտնվում է գյուղ Քարաշամբի Ամառանոցային թաղամասի 10-րդ փող. 1 Նրբ. 2 հասցեում:

**Համայնքի ղեկավարի ժ/պ՝** **ԱՐՇԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**